

ցիք, որ վերը յիշուեցան<sup>324</sup>: Պատահած է որ աւելի արժատական միջոցներ ալ ձեռք առնուած են: Յուլիանոս՝ երբ ի Կեսարիա Գամրացիք, որեւէ խիղճ չըրաւ պատերազմի սպառազինութեան բռնադատելու նաեւ կրօնաւորները<sup>325</sup>: Անտարակոյս այս խոշտանգումն աւելի իւր հեթանոսական զգացումներէն կը բղխէր քան վայրկենի պիտոյքէն: Բայց աւելի նորանշան կ'ըլլայ, ինչպէս որ ենթադրուած է, եթէ նաեւ Հերակլ, որ Քրիստոսի համար կը պատերազմէր, միեւնոյն միջոցն ընդունած ըլլայ:

(Շարունակելի:)

Հ. Յ. ՏԱՇԵԱՆ

**ԱՐՅԱՆԻ ՎԱՇՏԱՅԻՆ ԿԱՄ ՍՏՈՐԻՆ ԵՒ ՎԵՐԻՆ ԿԱՄ ՀԱՐԱՄԱՅԻՆ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՎԱՆՔԵՐԸ**

1.

ԱՐՅԱՆԻ ԳԱՇՏԱՅԻՆ ԿԱՄ ՍՏՈՐԻՆ ԵՒ ՎԵՐԻՆ ԿԱՄ ՀԱՐԱՄԱՅԻՆ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՎԱՆՔԵՐԸ

Արցախ նահանգի Դաշտային կամ Ստորին եւ Վերին կամ Հարաւային գաւառները շատ քիչ վանքեր ունին, ուստի եւ գանոնք — թէեւ իրարմէ բաւական հեռու — կը միացնեն: Նախ առաջինին վանքերը նկատի պիտի առնուին եւ ապա երկրորդինը:

Դաշտային կամ Ստորին Արցախի գաւառներն են.

Հին գաւառ                      Նոր գաւառ

- |                       |                |
|-----------------------|----------------|
| 1. Պիանք              | 1. Ճիւղբայիլ   |
| 2. Մուխանք կամ Մուգան | 2. Միւրի գաւառ |
| 3. Արանոս             | 3-4. Բեապիւր   |

<sup>324</sup> Պրոկոպ., Պ. Պ., Ա., 18, 40: Յուստինոսի Բ. օրով՝ Մարկիանոս, զօրավար Արեւելեց բանակին՝ ստիպուած էր Միջագետք մտնել «սակաւաթիւ գինուորներով, որոնք գէշ զինուած էին, հովիւներէ ու ուսնակներէ՝ զորոնք արտերէն առած էր» (Եւաղ., Ե, 8): Ասի եւ ո՛չ բարբարոսներ գտած էր պատերազմի պահանջներուն մէջ:

<sup>325</sup> Մագնիսիոս (Պատմ. Եկեղ., Ե, 4, էջ 1224 Migne) կը գրէ՝ Κληρονομία δὲ πάντας ἐγγραφήναι τῷ καταλόγῳ τῶν ὑπὸ τὸν ἀρχοντα τοῦ ἐθνους στρατιωτῶν, ὃ διαπαρηγοῦν εἶναι σφοδρὰ καὶ ἐπονεϊδίστον ἐν ταῖς τῶν Ῥωμαίων στρατιαῖς νομιλεῖται (Բոլոր կղերիկոսք պաւստին իշխանին ներքեւ եղած զօրաց ցուցակին մէջ, որ (գունդը) Հոռոմէացոց բանակաց մէջ շատ ծանրաբեռն ու եղբերիկ կը համարուի): Բայց այն քեզած կրօնաւորներն՝ որ Ամբաստանի աշտարակն ա՛յնպէս գէշ պահել կըցան (Պրոկոպ., Պ. Պ., Ա., 7, 22), կ'երեւայ թէ այս միջակ ծառայութիւնը մատուցած էին ամենայն բարեսէր յօժարակամութեամբ:

Հին գաւառ                      Նոր գաւառ

- |                                       |                              |
|---------------------------------------|------------------------------|
| 4. Տոխ                                |                              |
| 5. Ռոտպաղեան                          | 5-6. Զուանչիք                |
| 6. Աղուէ                              |                              |
| 7. Տուչքատակ, Թուանդիւտ, Տիգրանակերտ  | 7. Շահ-Պուլաղ                |
| 8. Ուտի առանձնակ                      | 8. Զուանչիք                  |
| 9. Շահաչէն, Արշակաչէն, Գանձակ, Գեանջա | 9. Գանձակ կամ Եղիսարեթոպոլիս |
| 10. Կողթ, Շամբոր, Զալամ               | 10. Ղաղախ                    |

Իսկ Վերին կամ Հարաւային Արցախի գաւառներն են.

Հին գաւառ                      Նոր գաւառ

- |                                  |              |
|----------------------------------|--------------|
| 1. Բերդաձոր, Բելուկան, Ղալաթերեի | 1. Ճիւղբայիլ |
| 2. Հարճլանք, Զառիստ              | 2. Հաճիլէր   |
| 3. Վայկունիք                     | 3. Զանգեղուր |
| 4. Միտական ոստան, Ծար, Զար       | 4. Զար       |
| 5. Վարդանակերտ                   | 5. — — —     |

(Բարխուդարեան Մ. եպ., Արցախ, Բաղու 1895, էջ 22—23, 25—26 եւ 26—60, 399—412:)

Ա.

Ստորին եւ Վերին Արցախի գաւառներու վանքերն ի մի կ'ամփոփենք, վասն զի շատ սակաւ են թուով:

1. ԽՈՐՈՏԿԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

Զախամի մէջ<sup>1</sup>: Ալեքսան արեղան Խորոտկանի մէջ 1490ին կը գրէ Աւետարան մը, որուն յիշատակագրութեան մէջ կան կարեւոր տեղեկութիւններ՝ «Արդ եղև զբաւ զըջութեան այս աստուածաշունչ սուրբ աւետարանիս ի յերկնահանգէտ եւ զերահոչակ սուրբ ուխտս Խորոտկայ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ Յակոբիս եւ սուրբ Նշանիս եւ այլ սրբոցս որ աստ կան: Որ բազմաժամանակեա(յ) անմարդայրեակ լեալ եւ խախտեալ հիմանց սորա: Եւ ետո (յետոյ) սրբամիտ եւ աստուածասէր եւ մեծագգի տեսեալ զսուրբ ուխտս այսպիսի խախտեալ, խանդաղատեալ սորա. վասն որոյ ջերմեռանդ սիրով եւ եռայրիափառ տեսչ-

<sup>1</sup> Բարխուդարեան, անդ, էջ 57:

մամբ Աւան աղէս նորոգեաց զսուրբ ուխտս եւ շատ աշխատութեամբ կատարեաց... Ի առաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Ղուկասին, որ է սրբամիտ եւ հեզահոգի եւ խոնարհ եղբայրսիրութեան ի հայրապետութեան տէր Ղազարին եւ փակակալութեան տէր Սիմէոնի եւ տնտեսութեան Շանչին...» (Աճառեան Հ., Յուլ. հայ. Զեռ. Նոր Բայազէտի, էջ 23. Սմբատեան, Գեղարքունիք, էջ 54):

Շահարասի օրով հոս առաջնորդ կ'ըլլայ Գեղամացի Դաւիթ եպիսկոպոսը, որ 1610ին անոր եկեղեցին կը շինէ (Սմբատեան, անդ, էջ 407 եւ Մառ Ն., Յուլ. հայ. Զեռ. Սեւանայ, էջ 16, Թ. 35):

2. ԱՂԱՃ-ՂԱՎԱՅԻ ԿԱՄ ՇԱՀ-ՓԵՔԱՐԻ ՎԱՆՔԸ  
Կողթի Աղաճ-Ղալա կամ Շահ-Փեքարի դղեակին «արեւելեան կողմում կայ մի փոքրիկ վանք, որ ամբողջապէս կանգուն է եւ որի հարաւին հանդէպ կայ մի փոքր եկեղեցի, զիւղատեղի եւ հանգստարան» (Արցախ, էջ 58): Գուցէ այս վերջինները կը վերաբերէին վանքին:

3. ԽԱԼԽԱԼԻ ՎԱՆՔԸ

Կողթի վանքերէն: Շամբորի մօտ Խալխալ քաղաքին քով կը գտնուի վանք մը, որուն (խկալան) անունը կը մնայ անձանօթ (Բարխուդարեան, Արցախ, էջ 58):

4. ՎԱՆՔԱՍՍՐԻ ՎԱՆՔԸ

Տիգրանակերտ գաւառին (Շահ-Բուլաղ) համանուն աւանին աւերակներուն վերեւն է վանքասարը<sup>2</sup>: Այսպէս կոչուած է, վասն զի անոր գագաթին վրայ վաչէ Բ. թագաւորը խաչաձեւ մենաստան մը շինել սուած է: Մենաստանին գլուխը բոլորովին խոնարհած է (Արցախ, էջ 28 եւ 414):

5. ԲՐԴՄԱՆԿԱՅ ՎԱՆՔԸ

Շեկաչէն-Գանձակ գաւառի մէջ: Ծանօթ հետեւեալ ընդարձակ յիշատակագրութեան՝ «Փառք... Արդ... գրեցաւ սուրբ Մաշտոց... ի թուականութեանս ԶԿԻ (1515) ի

կաթողիկոսութեան տէր Ռասակէսի ի դատութեան Շահ Իսմայէլին ԺԴ. ամին: Եւ է սա ի լաւ եւ ընտիր աւրինակէ... ձեռամբ... անարհեստ գրչի Ալեքսանոս արեղայի... գրեցաւ յերկիրս Գանձակա ի վանքս Քրոմանկայ ի դուռս սուրբ տաճարիս Ս. Յովհաննիսիս<sup>3</sup>, ի խնդրոյ բարի... առաքինասէր եւ առաջնորդ ուխտիս արհիպիսկոպոս տէր Բարսեղ ստացող սորին...: Ի վայելումն անձին իւրոյ եւ յիշատակ հոգոյ իւրոյ եւ ծնողացն հաւրն պարոն Պէպուզին որդի Ղարամանին եւ թոռն մեծ Սատոնին եւ մաւրն պարոն Խոնձատին եւ այլ եղբարցն որ ի Քրիստոս հանգուցեալ Սատոնն եւ Շահարպուզն եւ փոքր եղբարն Ղարամանին եւ եղբարորդեացն Տէաւնտեարին եւ Պէպարին: Եւ հաւրեղբարն դատերն Հոխիսիմեայ հաւատաւորին: Եւ քվէրանցն...<sup>4</sup> Եւ միտարն որդոց սորա Իղնատիոս արեղայն, Ղուկաս արեղայն եւ Յոհան դպրին, Տէրուն դպրին, եւ միւս Ոհան դպրին եւ Միսիթար դպրին, Թաղէոս միայնակեցին եւ Մկրտչի: Ընդ նոսին եւ գանպիտան զրիչս Ալեքսանոս հանդերձ ծնողաւք իմ յիշեցէք ի Քրիստոս...»: Նկարողն է Յովհաննէս: Թղ. 111ր կայ «Հոխիսիմէ հաւատաւորն սպասաւորէր, զմիտարանքս եւ զմեզ կերակրէր» (Ալիւսեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ., Tübingen, Nr. 28, թղ. 352ր—354ա. հմմտ. Fink, Hauptkatalog der königl. Universitätsbibliothek zu Tübingen, MA. Nr. 28):

6. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ (ԼԵՂԱՆԻ) ՎԱՆՔԸ

Գանձակի վանքերէն: Ծանօթ յիշատակագրութեանէ մը:

«Սկիզբն եղև զործառնութեանս այսմիկ նախախնամութեամբ սուրբ Հոգւոյն յաստուածապահ գաւառիս Գանձակայ ընդ հովանեաւ Լեղանի սուրբ Աստուածածնիս եւ արհիպիսկան յաթոռիս եւ առաջնորդութեան իմոյ Ստեփաննոս յեպիսկոպոսիս սուրբ ուխտիս...» (Աւետարանը կը գրուի 1445—1467 շրջաններուն, հմմտ. Մառ Ն., Յուլ. հայ. Զեռ. Սեւանայ, էջ 13. Սմբատեան, Գեղարքունիք, էջ 399, Թ. 28): Հոս յիշուած Գանձակի վանքերէն մաս մը կարելի է Գարդմանի վանքերու տակ գասել:

<sup>3</sup> Գանձակի մէջ կայ Ս. Յովհաննէսի եկեղեցի մը (Արցախ, էջ 36):

<sup>4</sup> Յոռաջ կը բերուին անուններ:

<sup>2</sup> Բէշիկ-Ղաչի:

7. ՊԱՅՆԱՆՅՑ (Ս. ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԻ) ՎԱՆՔԸ

Ծանօթ է հետևեալ յիշատակադրու- թիւներէն՝ 1. «Գրեցաւ (Աւետարանս 1669ին) . . . ի հայրապետութեան տանս Աղուանից Տեան Պետրոսի կաթողիկոսի եւ առաջնորդութեան սուրբ մենաստանիս Պայա- նու Անտոն պարոնաբի . . . ի յերկիրն Գան- ճայու ի գեղս Քարառակ ընդ հովանեաւ նո- րակնունք սուրբ եկեղեցոյս եւ սուրբ Գար- րիէլ եւ Միքայէլ տաճարիս» (Արձագանք, 1888, էջ 133—134) :

2. «Թ՛ւին ՌՄԺԲ(. . .) . . . առայ Յով- հաննէս սուրբ աւետարանս ի ձորս Գանձա- կու ի երկիրս Գանձու, ի գիւղս որ կոչի Պայանանց ի դուռն սուրբ Հրեշտակապետ եկեղեցոյ, ի հայրապետութեան Գանձասա- րու տէր Ներսէսին» (Թօփճեան, Յուլ. հայ. Ձեռ. Գաղեան Վ. ի, Բ., էջ 46) :

8. ԲԱՐԱՀԵՐՁԻ ԱՅՐԵՐ ԿԱՄ ՕԵԹԸ ԵՂՅԻ

Գանձակ դաւառին մէջ : «Շամբոր գետի ափին ձգւում է մինչեւ Շիպասարը մի լեռնարագուկ, որի հիւսիսա- հայեաց ծայրի քերձերում փորուած են քա- րայրներ» որոնց մէջ երկար առեն Աղուանից Յովհաննէս կաթողիկոսը պատասխարուած է : Հաւանօրէն ձգնատեղիներ են եղած այդ քա- րայրները (Ազգր. Հանդ. 1899, Ե., էջ 344) :

9. ԲԵՐԿԱՉՈՐԻ Ս. ԳԻՐԳՈՐԻ ԿԱՄ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԸ

Բերգաձորի Պոխկայ բերդի դիմաց, Լա- րան ձորի մէջ, Վաղահասէն 10 վերստ հե- ոու : Նման է օրօրոցաձեւ եկեղեցոյ : Ունի թաղակապ գաւիթ : Կացարանները քան- դուած : Արտաքին պատերուն վրայ կան ար- ձանագրութիւններ (1229 թուականէն) (Արա- րատ, 1896, էջ 80—81. Բարխուդարեան, Արցախ, էջ 25) :

10. ԾԱՐԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ ԿԱՄ ԳԵՏԱ- ՄԵՁԻ ՎԱՆՔԸ

«Արբատաչ քարով շինուած է տաճարս, որ կանգուն է նոյնութեամբ, գտնուած է Ծարի հարաւային վիմահերձի տակ, երկու ջրա- խառնուրդի մօտ, որք են Տաք-Ղրի եւ Ջրիւլ գիւղի վտակներն» (Արցախ, էջ 407) :

Ծարի այս մենաստանը փոքր է եւ շատ գեղեցիկ : Ունի հետևեալ արձանագրու-

թիւներ, որ միանգամայն իր պատմութիւնն է՝ «Ի Ժամանակին յորում տիրեալ ազգն նետո- ղաց բազում աշխարհաց եւ մինչեւ յովկիա- նոս ծով եւ Ստամպուլն ի Պոնտոս եւ մին- չեւ ցղեան Եփրատես տիրելով գոռոզարար եւ ծանր հարկապահանջութեամբ ցաւեցու- ցանելով զամենեւեան զմեծամեծս եւ զիտ- քունս ի մահ եւ զերութիւն մատնելով, յայտմ Ժամանակի. զառնութեան որ էաք մեք տէր Յովհաննէս Դոփեան տրուպ եւ նուաստ եւ տկար հոգի, հասաւ մեզ հրաման ի նախա- հարցն մերոց զնալ ի մեր հայրապետացն ա- առջնո(ց) աթոռն հոչակելի Հախպատ, դարձ արարեալ ի մեր հայրենական եւ ընդի տունս հարազատ աւագ եղբաւր Հասանայ քաջ զօ- րականին եւ հոչակաւոր արիացելոյն, որ եւ սրգի իւր Գրիգոր սիրող եկեղեցոյ եւ քահա- նայից եւ ամուսինն իւր բարեհամբաւ Ասիայ դուստր մեծի կոմսի Տարսայիճի իշխեցողի կողմանցն Սիւնեաց՝ եւ մեր հայեցեալ ի ձո- րակս, զի հոսէին ջուրք աստի եւ անտի եւ ի միջի նոցա բլրակ մի գեղեցիկ, ես հաճեցայ ընդ սա եւ մտայ յանապատս եւ սկսայ շինել մատուռ մի եւ յայտմ խորհրդի եկն Գրիգոր եղբաւրորդի մեր եւ իշխան դաւառիս եւ այլ շատ կողմանց իշխեցող եւ կամեցան շինել զսուրբ Աստուածածինս ի բարեխաւս մեզ եւ ամենայն քրիստոնէից. ես տէր Յովհաննէս արարի սկիզբն շինութեան եկեղեցոյս ի թուին 20» (Արցախ, էջ 407—408) :

Տաճարին մերձ սքանչելի խաչարձանի մը վրայ կայ՝ «Աստուծով ես Սայաի որդի Շան- շին քաջ եւ յաղթող զաւրավարին եւ մեծ իշ- խանաց ազգէն եւ ի թուին ՊՅԺ. տեղեացս տէր եւ պարոն փոքր Սիւնեաց, Ականայ, Հա- թերքայ եւ Հանդարերդի եւ ծովակին Գեղա- մայ մինչ ի Շաղվաքայ կանգնեցաք զխաչս հաւր մերոց Շանշին» (Արցախ, էջ 408, Ջա- լալեան, Ճան., Ա., 408, Շահխաթունեան, Ստորագրութիւն, Բ., էջ 364. Էփրիկեան, Բնաշխ. Բառ., Բ., էջ 239) :

Հաւանականաբար այս վանքին իսկական անունն է Գետամէջի վանք<sup>5</sup>, բայց եկեղեց- ւոյ անունովը կոչուեր է եւ Ս. Աստուածա- ծին : Ծառոց մը կը գրուի 1410ին «յաստուա- ծաչէն երկիրս Ծար կոչեցելոյ ի վանս Գե- տամէջ ընդ հովանեաւ սուրբ Աստուածա-

<sup>5</sup> Ծարի արեւելեան ստորոտը կայ գեռ ուրիշ վանք մը : Անունն՝ անձանօթ (Արցախ, էջ 408) : <sup>6</sup> Հմմտ. Գետամէջ եւ Ծար ի Սիւնիս, Ալիշան, Սիւսական, էջ 61 :

նիս . . . » (Նօտարք, էջ 39—40) : 1455ին Աւե- տարանի մը արտագրութիւնը կ'ըլլայ «ի հոչակաւոր վանքս Գետա (գուցէ՛ Գետամէջ) ընդ հովանեաւ սուրբ Աստուածածինս եւ սուրբ Ստեփաննոսիս» (Թօփճեան, Յուլ. հայ. Ձեռ. Գաղեան Վ. ի, էջ 31) : 1588ին Աւետարան մը կը գրուի «ի գաւառիս Ծար, ի վանս Գետամիջոյ» (Ալիլիեան, Հաւաք. Յիշատ. Հ. Պոտուրեանէն) :

2.

ԱՐՅԱՆԻ ԼԵՌՆԱՅԻՆ ԿԱՄ ՄԻՋԻՆ ԳԱԻԱՌ- ՆԵՐՈՒ ՎԱՆՔԵՐԸ

Արցախի վանքերուն մեծագոյն մասը կը գտնուի անոր լեռնային կամ միջին գաւառ- ներուն մէջ :

Սոյն գաւառներն են՝

Հին գաւառ	Նոր գաւառ
1. Պարզկանք, Գիլակ	1. Ճիւղայիլ
2. Հարանդ (Միւս Հա- րանդ), Ամարաս, Վա- րանդա	2. Վարանդա
3. Մեծիրանք (Մեծա- րանք) Ներքին Պաչէն	3. Պաչէնք
4. Ըռտակ, Հաթերք	4. Ջրաբերդ
5. Մեծկողմանք, Չարա- րերդ, Ջրաբերդ, Գիւ- լիստան	5. Ջուանշիբ
6. Գարդման, Գարթմա- նիկ	6. Գանձակ
7. Փառխոս	7. Ղազախ կամ Շամշա- սիլ
8. Բուստի	8. Ղազախ կամ Շամշա- տիլ
9. Չաւէ, Չորագետ, Սե- ւորեկաց կամ Կայենոյ երկիր	9. Ղազախ կամ Շամշա- տիլ

Ա.

Պազկանքի (Պանձկանքի) կամ Դիգակի վանքերը :

Պազկանք (Պանձկանք), այժմ կոչուած Ջարբայիլ՝ գաւառը կը գտնուի Երասխ գետի ձախ եւ Ղուրուչայի աջ ափին, Հաղրութի եւ Դիգափայտի լեռնաշղթային գագաթնա- դին մէջ (Բարխուդարեան, Արցախ, էջ 28) :

1. ԳՏՁԱՅ ՎԱՆՔԸ

Թաղլար (աւանին դիմաց, Տող գիւղի մօտ, Ղուրուչայ գետակին աջ ափին, գեղեցիկ եւ հիւսիսահայեաց սարահարթակի վրայ

հիմնուած է Գոշայ կամ Կոշոյ վանքը : Շի- նուած է համակ սրբատաշ տորոնագոյն քա- րերով, խաչաձեւ, քառակուսի, չորս կա- մարներով, որոնց վրայ բարձրացած է սի- րուն կաթողիկէն : «Վանքս ունի մի աւագ, չորս փոքր խորան տասնուերեք լուսամուտ, մի դուռն, 10 մետր երկարութիւն եւ 7.50 մետր լայնութիւն» (Արցախ, էջ 80) : Հիւսիսային պատին վրայ փորագրուած է՝ «Յանուն Հաւր եւ Որդոյ եւ Հոգւոյ սրբոյ, ես Սարգիս եւ Վրդանէս եպիսկոպոսք հիմ- նեցաք գեկեղեցիս ի ՈՂ (1241) թվիս. շատ աշխատութեամբ աւագ խորանն խիեցաւ եւ եղբայրս իմ Տէր Սարգիս ի Քրիստոս փոխե- ցաւ : Ես Վրդանէս կատարեցի բազում աշ- խատութեամբ եւ հալալ արգեամբք իմովք ՈՂէ (1248) թվիս, ի դառն եւ ի նեղ ժամա- նակիս, որ ազգն նէտողաց զբազում գաւառս աւերեաց եւ մնաց այլասեռից աթոռ եւ վի- ճակ սրբոյն Գրիգորիսի, որ է հաստատեալ աջով եւ սուրբ նշանաւն եւ գաւազանաւն սրբով, վիճակեցաւ եւ սահմանով ի յԱղուա- նոյ գետոյ մինչ ի Երասխն, մինչ ի Աւազն Գատուհատի, Վախունիս Վաղազնագետով, ի Քարատիս եւ Պոզանագետովն, Չառխոս իւր գետովն, Հաքարի Հաղարագետովն, Քրտագետ իւր գետովն, իւր սահմանովն, Դիգակ, Բէշլուկան իւր գետովն եւ հայրենիքն եկեղեցոյս տուննք, Փարսինս եւ Գոտանոցն, Եկեղեցաձորն իւր սահմանովն, Ա. Լուծ հոգ ի Տայիս, Ա. Լուծ ի Դող ի Գաղս, Ա. ի Մոխրենիս . . . ով որ այս սահմանէս յեա առնէ կաթողիկոս . . . բաժին ընդ Յուլայի առցէ» (Արցախ, էջ 80—81) :

Հարաւային փոքր խորանին ներքին ճա- կատին վրայ կայ՝ «Ի թվին ՈՂԵ (1246) ես Տէր Վրդանէս շինեցի գեկեղեցիս եւ զգրուեալ վիճակս հաստատեցի եւ զհայրենիքս եւ ար- ձանի գրեցի հանապաղ ուրիաթն անյիշատա- կաց ժամն եւ տարւոյն ժ. ժամ ինձ եւ ժ. ժամ տէր Սարգիսի : Յինանցն Ա. ժամ Ուխ- տանէս եղբաւրն իմ, Ա. ժամ Մովսիսի իմ քվեր որդու, ով խափանէ մեր մեղացն տէր է առ Աստուած» (Արցախ, էջ 81) :

Հիւսիսային փոքր խորանին ճակատին վրայ՝ «Ես Ջերգամ եւ որդի իմ Ղարաք միա- բանեցաք սուրբ ուխտիս. տէր Վրդանէս իւր կամաւ գժամատունն ինձ ետ եւ ես իմ հա- լալ արդիւնն ընծա բերի սուրբ առնողոյս» (անդ, էջ 81) :

Վանքը դաւիթ մը ունի, որ անկէ շատ յառաջ շինուած է: Հոն կան երկու խաչարձան հետեւեալ արձանագրութիւններով (միոյն վրայ) «ԹՎին ՈՂԷ. Ես տէր Վրդանէս կանգնեցի զխաչս ի փրկութիւն հողոյ իմոյ» (միւսին վրայ) «Յիշատակ է սուրբ տաճարիս կաթողիկէն Դողեցի Սարգսի որդի Սայուն եւ իւր կողակից Հերիքնազին թվին ՌՃԿԶ» (անդ, էջ 81—82):

Սոյն դաւիթին մէջ քանի մը եպիսկոպոս եւ վարդապետ թագուած են:

Հաւանորէն Գոշայ կը վերաբերէր անոր հիւսիսային կողմը գտնուած եկեղեցին ալ, որուն դրան առջև տապանաքարի մը վրայ կայ՝ «Այս է տապան տէր Սիմէօնի որդի Մեսրոբ վարդապետին թվին ՌՃՀԲ: Լուսահոգի Մէլիք Եկանն ձեռնադրել տվաւ եպիսկոպոս, կարգեց Կտիչոյ վանքին առաջնորդ, որ եկի հաստատեցի սուրբ աթոռս թվին ՌՃՂԶ...» (անդ, էջ 82):

Գոշայ վանքի պատմութենէն շատ քիչ բան ծանօթ է: Վերոյիշեալ արձանագրութիւններն են որ անոր մասին տեղեկութիւններ կու տան: Ունեցած է բազմանդամ միաբանութիւն, նաեւ եպիսկոպոսներ: — 1668ին հոս՝ «Կտիչոյ» մէջ Մատթէոս քահանայի համար Աւետարան մը կը գրուի (Ալիշան, Սիւսական, էջ 270): — Դաղեան վարդապետին Ձեռագրաց հաւաքածոյին մէջ եղած է «Պատմութիւն Գոշոյ վանուց» (Թօփճեան, Յուլ. հայ. Ձեռ. Դաղեան Վ. ի, Ա., էջ 102):

Գոշայ վանքը ստացած է շատ մը հոգիեր<sup>1</sup>, բայց անտեսուած է եւ «հետզհետէ քայքայուած է». երկրաշարժի եւս ենթարկուած է (Բարսիանեանց, Լէօ, Ուխտաւորի յիշատակարանը, էջ 23. Հմմտ. նաեւ Արձագանք, 1886, էջ 578. Չալայեան, Ճամբ. Բ., էջ 258 եւ Էփրեկեան, Բնաշխ. Բառարան, Ա., էջ 563—564):

2. ԴԻՉԱՓԱՅՏԻ ԿՍՄ ԿԱՏԱՐՈՅ ՎԱՆՔԸ

Դիզափայտի ամբողջէն քիչ մը հետու: Անոր աւերակներուն վրայ այսօր կը նկատուի միայն մատուռ մը:

Յայտնաւորքը Դիզափայտի անունը հետեւեալ դէպքին կը վերագրէ՝ «Իսկ որդիք զօրավարին (Թէվոփիեայ) Մովսէս եւ Շրանողիս (Աներողդէս) եւ այլք զօրքն հաւա-

տացեալ փախեան ի լեառն որ կոչի Դիզափայտ, որոց զհետ երթեալ անորինացն կոտորեցին զնոսա... այրեցին հրով եւ անուանեցին զլեառն Դիզափայտ, վասն զի քան զփայտ զիղեցին զնոսա եւ այրեցին»: Անոնց աճիւններովը նուիրականացած այդ վայրին մէջ... յետ ժամանակաց միայնակեացք ոմանք, արք ճգնաւորք եկեալ բնակեցան անդ եւ արարին իւրեանց վանս գտեղին»:

Միեւնոյն տեղը նահատակուած են նաեւ Սանեսանի քրիստոնեայ որդիներն՝ ուրիշ շատ մը հաւատացեալներու հետ (Ինճիճեան, Ստորագրութիւն, էջ 316. Չամչեան, Պատմ. Հայոց, Բ., էջ 127. Տաշեան, Մայր Յուցակ, էջ 40 եւս. Օրբէլեան, Պատմ. Տան Սիւս., էջ 202. Գլ. ԼԹ, Բարխուդարեան, Արցախ, էջ 85 եւ 422. Ճոաքաղ, 1860, էջ 220. Լէօ, Ուխտաւորի յիշատակարանը, էջ 53—86, կարեւոր՝ Մովսէս Կաղանկատուացի, Պատմ. Աղուանից, էջ 113—116 եւ 134. Էփրեկեան Հ. Ս., Բնաշխ. Բառարան, Ա., էջ 605):

Բարխուդարեան Դիզափայտը կ'անուանէ Կատարոյ վանք (Արցախ, էջ 422. Հմմտ. եւ էջ 85): Ծանօթ է համանուն վանք մը Սիւնիքի մէջ (Օրբէլեան, Պատմ. Տան Սիւս., էջ 245. Հմմտ. Ալիշան, Սիւսական, էջ 278), նաեւ ծանօթ է «Կատարոյ վանուց տանուտէրը (Հմմտ. Կաղանկատուացի, Պատմ. Աղուանից, էջ 343):

Ձեռագրի մը յիշատակագրութեան մէջ կայ՝ «Յիշել ի աստուածամերց աղօթս ձեր հոգեւոր ծնողն իմ հանդուցեալ ի Տէր Երեմիայ եպիսկոպոս աջնորդ սուրբ ուխտին Դիզափայտ կոչեցելոյն երկրի Դիզափայտ» (Աճառեան, Յուլ. հայ. Ձեռ. Թաւրիզի, էջ 18բ):

3. ԴՈՂ ԱՒԱՆԻ ԿՈՒՍԱՆՈՑ-ԱՆԱՊԱՏԸ

Դող աւանի մօտ, եկեղեցւոյ մը քով՝ «նշմարուում են խուցերի եւ կացարանների բակեր եւ բեկորներ, որոնց մասին պատմում են թէ՛ կուսանոց եղած է անապատ» (Արցախ, էջ 77): Եւ այդ ճիշդ է: Վասն զի արձաթեայ խաչի մը վրայ արձանագրուած է՝ «Յիշատակ է մէլիք Եսայի որդի Սաֆարի բէկին, որ ետ Դողա կուսանաց անապատին սա է Յակովբ հայրապետին եւ Թէոփորոսի մատուցք» (Արցախ, էջ 74): Հաւանական է թէ Աւանի մեղիքները զեռ ուրիշ նուիրատուութիւններ ըրած ըլլան այս կուսաստանին:

<sup>1</sup> Ամբողջապէս իրմէ յափշտակուած:

4. ԹԵՂԱՍԵՈՒ ԵՎ ԱՆԱՊԱՏԸ

Թեղասեռի կամ Թաղասեռի մօտ կայ եկեղեցի մը, որ անապատ կը կոչուի եւ այն գուցէ անոր համար, որ երբեմն անոր շրջակայքն անապատ մը կար (Արցախ, էջ 69): Աւետարան մը կը գրուի «ի յերկիրս Աղուանից ի գաւառիս Դիզափայտ» ի գաւառս որ կոչի Թեղասիւր ի դուռն Ս. Սարգսիս... ձեռամբ Մելքիսեդ երկցու...» (Թօփճեան, Յուլ. հայ. Ձեռ. Դաղեան Վ. ի, Բ., էջ 46. Յուլ. հայ. Ձեռ. Դաղեան Վ. ի, Բ., էջ 143 եւ Եղիշէի վանքը): Ուրիշ Աւետարան մըն ալ կը գրուի 1635ին «ի գաւառս որ կոչի Թեղասեռ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս եւ սուրբ կուսին Քրիստոսի Աստուծոյ մերոյ...» (Հանդէս Ամսօրեայ, 1925, էջ 476):

5. Ս. ԼՈՒՍԱՒՈՐՁԻ ԱՆԱՊԱՏԸ

Յոր գիւղի հարաւային կողմի ձորի ձախ եղբրքին բարձրութեան վրայ կայ փոքրիկ հարթակ մը եւ անոր վրայ շինուած է «վահարթակ մը հին եւ անտաշ քարով եկեղեցի: Փոքր տաճարիս շուրջն հանդստարան է, բայց երեւում են խուցեր. թուի թէ փոքրիկ միաբանութիւն եղած է այս տեղ» (Արցախ, էջ 65):

6. ԾԱՂԱՎԱՍՏԻՔԸ

Ծաղուռի եկեղեցին կը կոչուի Ծաղկավանք, որ՝ «երեւի թէ վանք եղած է այս, յետոյ փոխած են եկեղեցու» (Արցախ, էջ 72—73. Էփրեկեան Հ. Ս., Բնաշխ. Բառարան, Բ., էջ 230):

7. ՀԻՆ ԱՌԱՔԵԼԻ ԱՆԱՊԱՏԸ

Հին Առաքել անուն աւերակ գիւղի մօտ կայ «աւերակ եկեղեցի... Անապատ անուն» (Արցախ, էջ 63). կը կասկած թէ խկական անապատ եղած ըլլայ:

8. ՅԱԿՈՎԿԱՅ ԵՎ ԻՐԱՒԱՓԱՌԱՅ ՎԱՆՔԸ

Ղուրուշայի աջ կողմը: Միջակ մեծութեամբ վանք մը: Ունեցած է ամուր շրջապատ, միաբաններու սենեակ եւ ուխտաւորներու բնակարան: Շինուած է «չորս սիւների վերայ կոփածոյ քարով եւ կրացեխով»: Սիրուած ուխտատեղի, բայց աւերակոյտի վերածուած է արդէն (Արցախ, էջ 71):

9. ՇԱԽԱՍԻ ՎԱՆՔԸ

Հատրութի վանքն է այս եւ մերձ Սպիտակ Սաչ վանքի (Հմմտ. անդ եւ Արցախ, էջ 68):

Այս վանքը հետեւեալ յիշատակարաններէ ծանօթ է: Արրահամ ՌԼԳ տարւոյն կը գրէ յիշատակարան մը՝ «Երկիրս Դիզափայտ եւ ի գաւառս Հատրութի յանապատս որ կոչի Շախկախ եւ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս ի հայրապետութիւն Տաւիթ կաթողիկոսին եւ ի սուրբ անապատիս առաջնորդութիւնն Յոհաննէս եպիսկոպոսէս եւ ի լաւանութիւնս Ստոյպանոյն դառն եւ զժուարին ժամանակիս (Քէշիշեան, Յուլ. հայ. Ձեռ. Չմմառի, Թ. 350): Ապա՝ «Աւետարան գրեալ ի թվ. ՌՃԻԲ. յերկիրն Դիզափայտի գիւղս Դաք ընդ հովանեաւ սուրբ եւ նշանաւոր տեղոջ, որ կոչի Շախկախ եւ այլ միաբանիցս Յակոբ եպիսկոպոսին եւ տէր Միկայիլին, տէր Բարդիսի գրոց աշակերտ Սաղաթին» (Ալիշեան Հ. Ն., Հաւաք. Յիշատ. Հ. Պատմութեանէն. — Դաք կամ Տաղ գիւղը Հմմտ. Արցախ, էջ 66): — Սիմէոն Կաթողիկոսը ՌՃԾ. ին թաղարցիներուն կը գրէ թէ Շախկախի եւ Սպիտակ խաչի վիճակ եղած են (Թօփճեան, Յուլ. հայ. Ձեռ. Դաղեան Վ. ի, Բ., էջ 41):

10. ՍՊԻՏԱՎ-ԽԱՉ ՎԱՆՔԸ

«Հինուած է վանք գիւղից ներքեւ մի տեսարանաւոր հարթակի վրայ, շինուած է անտաշ քարով եւ կրացեխով: Վանքս<sup>2</sup> ունի փոքրիկ կաթողիկէ եւ գաւիթ» (Արցախ, էջ 66): Տաճարն ու գաւիթը միասին գրեթէ տասնուհինգ մետր երկարութիւն եւ անոր կէսը լայնութիւն ունին: Առաջինին դրան հարաւային կամարի վրայ գրուած է՝ «Շիւնեցաւ ՌՃԶԳ, այն տարին էր Թահմազ-խան»:

Չանդակատան վրայ արձանագրուած է՝ «Յիշատակ է զանգակատունս Սուրապի որդոյ Ավանէս եպիսկոպոսին»:

Տաճարին ներք խաչարձանի մը վրայ կայ՝ Ես Սիրաւք կանգնեցի զխաչս հաւր իմոյ իրութլափի թվ. ԶԶԲ»: Իսկ անոր արեւմտեան դրան մօտ հանդստարանին մէջ կայ բեմ մը, որուն արեւմտահայեաց երեսին մէջ գետն-

<sup>2</sup> Սիմէոն եւ Ներսէս կաթողիկոսները Դիզափայտի Ս. իրաւ համար ունին քանի մը թուղթ (Հմմտ. Թօփճեան, Յուլ. հայ. Ձեռ. Դաղեան վարդապետի, Բ., էջ 42. Հմմտ. Շախկախի վանքը՝ վերը):

դուած է գեղեցկաբանդակ խաչարձան մը այս փորագրութեամբ՝ «Ես Աջամի որդի Իշխանայ կանգնեցի զխաչս ի փրկութիւն հողոյ որդոյ իմոյ Ասուգարայ, որք կարդէք, յիշեցէք ի սուրբ աղաւթս ձեր, աղաչեմ, ի թվիս 29 է»:

Բեմին առջեւը կըր տապանաքարի մը վրայ կայ՝ «Այս է հանգիստ բարեպաշտին Ասուգարայ, որ կէսաւրեայ ժամանակաւ ի Բրիստոս փոխեցաւ, ով կարդայ...»: Ասոր կից է՝ «Այս է հանգիստ բարեպաշտ Վալիշանայ, որ կէսաւրեայ ժամանակաւ ի Բրիստոս փոխեցաւ, ով...»: Միւս կողմը՝ «Ես Ախիջան որդի Չարալայ կանգնեցի խաչս ի փրկութիւն հողոյ որդոյ իմոյ Վելիջանին... թվ. 21 է»: Իսկ տապանին մօտ՝ «Այս է հանգիստ Խոնարեկուն, զուսոր Ախիջանին, կողակից Կոստանտէին եւ քոր Վելիջանին... թվ. 24 է»:

Վանքին հիւսիսային կողմը խոշոր սենեակ մը շինուած է ուխտաւորներու համար: Անոր դրան ճակատակալ քարին վրայ կը կարդացուի՝ «Ես Մակրտիչս յիշատակ է թանապէս (մեծ սենեակ) Սուրապի որդի Ավանէս եպիսկոպոսի. շինեցաւ ՌժՁԴ թվին. այն տարին էր Թահմազ խան, Օսմանլուն երկրէս զուրս արաւ» (Արցախ, էջ 66—67):

Սոյն հիւրանոցին մօտ կան երկու վիմափոր սենեակ, զուցէ ճգնարան կամ նոյն իսկ ննջարան:

Արձանագրութիւններէ եզրակացնելով Սպիտակ Խաչի վանքը՝ բաւական հին է: Գուցէ եպիսկոպոսանիստ, քանի որ հոն քանի մը եպիսկոպոսի աճիւններն ամփոփուած են: Ազուանից Եսայի, Ներսէս եւ Յովհաննէս կաթողիկոսներէն կոնդակներ ստացած է: Անոնք ուրիշ հնութիւններու հետ փախցուած են, հմմտ. վերը (Արցախ, էջ 66—68). Չարալան, ձամբ, Բ., էջ 263):

Անեցած է բաւական շատ կարուած (Արարատ, 1896, էջ 44):

Բ.

Վարանդայի վանքերը:

Վարանդա, կոչուած նաեւ Հարանդ կամ Միւս Հարանդ եւ Ամարաս, գաւառը ինկած

<sup>3</sup> Անոր բաւական մերձ է Ղուչիլար, որ Բերդավանք անուն եկեղեցի մ'ունի (Արցախ, էջ 65):

է Ղուրու չայի ձախ եւ Գարգար գետակի աջ ափերուն, Դիզափայտի եւ Քիրս լեռնաշղթայի զագաթնագծի ու դաշտաբերանի մէջ:

1. ԱՄՍՐԱՍԻ ՎԱՆՔԸ:

«Հիմնուած է այն երկրաշէջութի վերայ, որ Մուղան դաշտից կամ գաւառից մտած է Խաղաղի եւ Լուսաւորչի սարի մէջ եւ կազմած է դիւրալի հովիտ, որու մէջ հոսում է Ամարաս վտակն» (Բարխուդարեան, Արցախ, էջ 113): Երջմափակուած է 94 մետր երկար, 56.5 մետր լայն. եւ 5 մետր բարձր պարսպի մէջ, որուն չորս անկիւնները կը բարձրանան մէկական բուրգեր: Եկեղեցին 23 մետր երկարութիւն եւ 12.50 մետր լայնութիւն եւ 6 մետր բարձրութիւն ունի: Չորս քառակուսի անպատուանդան սիւներու վրայ կը բոլորուին կամարները, որոնց վրայ կը յենու ուսմանական կամարակապ ձեղունը: Արեւմտեան կողմի առաջին կամարներու միջեւ կը բացուի մէկ մետր տրամագիծով կըր անցք մը: Անոր վրայ շինուած է կաթողիկէ մը, որ իրբեւ զանգակատուն կը դորձածուի: Արեւմտեան պատին մէջ ուսմանական կամարով դուռ մը կայ: Օժտուած է տասը պատուհանով եւ երկու խորհրդարանով: Աւագ խորանին տակը կը դանուի «Վերապ» մը, այս է ստորերկրեայ մատուռ մը, որ շինուած է Ղազարի հանքի սրբատաշ քարերովը: Անոր մէջ ամփոփուած են Ս. Գրիգորիսի մատուռները: Այս՝ ամէնէն հին շէնքն է: Վանքն ու եկեղեցին ստէպ նորոգութիւն տեսած են, վերջին անգամը 1858ին:

Տաճարին հիւսիսային դասին քով, պատին կից կայ գերեզմանաքար մը՝ այս ծառայողութեամբ՝ «Իամբարան սրբոյն Գրիգորիսի Ազուանից կաթողիկոսի թոռին սրբոյն Գրիգորի Լուսաւորչի Պարթեւի: Ծնեալ յամի ՅԻԲ = 322, Օծեալ ՅՈՒ = 340, եւ նահատակեալ ՅՈՒԸ = 348ի Սանեսան թագաւորէն Մագգթաց ի Դերբէնդ, բերեալ յԱմարաս սուրբ Նշխարս ի ձեռն ձեռնասուն սարկաւազաց նորին Արցախունի: Արձանաքարս սրբոյն Գրիգորիսի աշխատութեամբ Միքայէ տէր Իսրայէլեանց Շուշեցոյ ի յիշատակ կենդանեաց եւ ննջեցելոց իւրոց ի

<sup>1</sup> Ամարաս օտարագիրներէ կոչուած է՝ Աղ-ող-լան, այս է՝ Սպիտակ տղայ (ձոռաքաղ, 1859, էջ 335. Արձագանք, 1886, էջ 577): — Համանուն վանք մը կայ Երուսաղէմ: Չայն Ազուանները շինած են Մ. Կաղանկատուացի, Պատմ., էջ 325):

1889 ամի 1 նոյեմբերի»: Այլ մը մէջ ամփոփուած են Ս. Գրիգորիսի մատուռները եւ անոր վրայ գրուած է՝ «Այ սրբոյն Գրիգորիսի Ազուանից հայրապետին շինեցաւ յամին 1870 ի Շուշի քաղաքի անվարժ աշխատութեամբ Շուշեցի ոսկերիչ Միրզաշանայ Խոջարագրեանց Գրիգորի Բագամեանց եւ Առաքելի Յարութեանց»:

Պարիսպին կից են կաթողիկոսին, միաբաններու եւ ուխտաւորներու սենեակները թիւով բաւական շատ: Ասոնցմէ զատ շինուեր են տնտեսութեան վերաբերեալ շէնքեր եւ պատշաճ տեղ մըն ալ գերեզմանոցի յատկացուած է (Արցախ, էջ 113—115. Ազգր. Հանդէս, 1897, Բ., էջ 37—39<sup>2</sup>. Արձագանք, 1886, էջ 577. Չարալան, ձամբորդութիւն, Ա., էջ 196):

Ամարասի եկեղեցոյն հիմնարկութիւնը Ս. Գր. Լուսաւորչին կ'ընծայուի (Մ. Կաղանկատուացի, Պատմ. Ազուանից, էջ 72), զանկատուացի, Պատմ. Ազուանից, էջ 72), բայց զայն աւարտած ու օծած է Ազուանքի առաքելը՝ Գրիգորիս եւ ուր ապա կը բերուին եւ դարերով յարգանքի առարկայ կ'ըլլան իր մատուռները: Ամարաս նախապէս լան իր մատուռները: Ամարաս նախապէս կաթողիկոսանիստ<sup>3</sup> վանք կ'ըլլայ եւ ապա կաթողիկոսարան: Մեր նպատակէն զգալի չեղում ըրած կ'ըլլանք, եթէ ծանրանանք կաթողիկոսական աթոռին հոն հաստատուելու անցքերուն եւ կաթողիկոսներու դորձուցումը: Անոր հիմնարկութեան տարին ու միւս պարագաները կը մնան տարակուսական, մանաւանդ թէ անձանօթ:

Անդրադառնալով Ս. Գրիգորիսի մատուռներուն՝ զանոնք Ազուանքի Վաչագան Գ. թագաւորը կը գտնէ եւ վերստուգելէ յետոյ՝ անոնց ամփոփումին համար եկեղեցի մը կը շինէ: Ապա դարեր վերջ անոր նշխարները նորէն յարգանքի յատուկ առարկայ կ'ըլլան եւ կոփածոյ քարէ շինուած շէնքի մը վրայ կը գետեղուին (հմմտ. վերը, եւ Արմը մէջ կը գետեղուին Մասիս, 1858, ձագանք, 1886, էջ 577. Մասիս, 1858, Թ. 332. ձոռաքաղ, 1859, էջ 342—348, 1860, էջ 219—220. Արշալոյս Արարատեան, 1859, Թ. 573. հմմտ. եւ Մ. Կաղանկատուացի, Պատմ. Աղ., էջ 73—94): Բայցուին խանը Ամարասէն Ս. Գրիգորիսի գաւազանն ու գաւազան ակերով գարդարուն խաչ մը կը

<sup>2</sup> Հմմտ. նոյնը, Լալայեանց Ե., Վարանդա, Թիֆլիս 1898, էջ 379):  
<sup>3</sup> Հմմտ. Գառնիկ եպ., Ամարասի (Վաչագան Գ. Թ. Ժամանակ) Մ. Կաղանկատուացի, Գլ. Ե:

գրաւէ, բայց Դեսպինա արքայադուստրը գանոնք ետ կը ստանայ<sup>4</sup> (Օրբէլեան Ստ., Պատմ. տանն Սիւ., Գլ. ԿԹ, էջ 344): Լենկթիմուրեան արշաւանքներու ատեն Ամարաս ծանր հարուածներ կ'ընդունի: Դարեր յետոյ (ԺԹ.) թուրքերը զայն գրաւելով իրենց աղօթատեղին կ'ընեն. եղած է նաեւ բերդատեղի ու մաքսատուն, մինչեւ որ Բագրատաւոր մետրապօլիտը կը յաջողի զայն օտարին ձեռքէն ազատելու (Ազգր. Հանդ. 1897, Բ., էջ 8. հմմտ. եւ Բաֆֆի, Խամսայի մեղիքութիւնները, Գ. տպ., Վիեննա, էջ 329):

Ամարասի մէջ ու մերձ արտագրուած են քանի մը ձեռագիրներ: Մանուէլ 1428ին կը գրէ Աւետարան մը «ի վիճակս Ամարասայի ի վանքս Գթիսոյ» (Մարտեան, Երնշակ, էջ 253), 1559ին Գրիգոր կ'արտագրէ նոյն գիրքը (Մատն., Յուց. հայ. Ձեռ. Սեւանայ Թ. 4, էջ 4): 1664ին գրուած յիշատակարան մը կ'աւանդէ այն շինարարական գործունէութիւնը, զոր Բարսեղ եւ Պետրոս կ'ունենան Ամարասի մասին (Թօփճեան, Յուց. հայ. Ձեռ. Դաղեան Վ. Ի, էջ 100, հմմտ. Հերհեր):

Ամարաս ունեցած է առատ վարելահող, սոյլի, ջրաղաց, նաեւ ամարանոցներ (հմմտ. Հերհեր եւ Ջոխա Պուրաճառի վանքերը), ինչպէս եւ նախիր ու արջառ (Արցախ, էջ 114. Ազգր. Հանդ. 1897, Բ., էջ 39. Թօփճեան, Յուց. հայ. Ձեռ. Դաղեան Վ., էջ 100, ուր եւ նորոգութիւն Ամարասի, Նոր Դար, 1903, Թ. 78. Լէօ, Ուխտաւորի յիշատակարանը, 1885. Շուշի, յաւելուածը էջ 1—14. Արարատ, 1896, էջ 44. Արձագանք, 1886, էջ 577. Միխիթար վարդապետ, Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ 1906, էջ 10—12, ուր եւ Արցախի ուրիշ վանքերու հողերու մասին եւս. Էփրիկեան Հ. Մ., Բնաշխ. Բառարան, Ա., էջ 135—136):

Դիւթական տեսարաններով եւ նշխարներով հարուստ<sup>5</sup> Ամարաս Արցախեցիներու ամէնէն սիրուած ուխտատեղին էր, մանա-

<sup>4</sup> Վրթանէս Քերթովի ատեն կ'ապրէր՝ «Տէր Միխիթար Ամարասու եպիսկոպոս» (Արարատ 1866, էջ 477): — Վերջին շրջաններու առաջնորդներէն է Յակոբ Վ. Նորատուհեան (Արարատ, 1886, էջ 40—41, ուր եւ յիշուած են Արցախի քանի մը վանքերու վանահայրերն էս):

<sup>5</sup> Ամարասի մէջ — ըստ այլոց Գանձասարի մէջ — կար արիւնն Չաքարիայի եւ մասն Ս. Պանդուկոսի (Տաշեան, Մայր Յուց., էջ 58. Արցախ, էջ 176): Անոնք կրնան նախ Ամարաս եղած ըլլալ՝ եւ ապա Գանձասար փոխադրուած:

անդ Համբարձման, Սաշի եւ Վարդապետի տօներուն հոն կը խուժէին շատերը: Ստացած է շատ նպաստ (Բիւզանդիոն, 1903, թ. 2033. Նոր Դար, 1903, թ. 76. Ազգր. Հանդ., 1897, էջ 7—8. Արձագանք, 1886, էջ 574. Արարատ, 1872, էջ 26):

2. Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԱՆԱՊԱՏԸ

Շուշիի մերձ կուսանաց անապատ մը կայ որուն Ս. Աստուածածնի ընծայուած եկեղեցին շինուած է 1816ին՝ «արդեամբ ձեռագործ աշխատանաց կոյս Հոփիսիմեայ, օժանդակութեամբ երկը եղբարց իւրոց հարազատաց Իսրայէլի, Աստուածատրոյ եւ Պետրոսի Գրեգորեանք Բահաղուրեանց...» (Արցախ, էջ 148):

3. ԱԵՏԱՐԱՆՈՅԻ ԿՈՒՍԱՆԱՅ ԱՆԱՊԱՏԸ

Աւետարանոց աւանի մօտ բարձրավանդակի մը վրայ հիմնուած է կուսանաց անապատ մը, որ պարսպով շրջապատուած է: Տաճարը քարաշէն է եւ ունի 11 մետր երկարութիւն եւ 9 մետր լայնութիւն: Վէճքարի վրայ քանդակուած է՝ «ԹՎ. ՌԿԵ. ԵՍ ԱԹԱՍ ՀԻՄՈՒՅԻ (?) Կանդնեցի խաչս ի հայր իմ (հայրենի) վիճակին»: Դրան ճակատակալ քարին վրայ կայ՝ «Եկեղեցիս թՎ. ՌԿԵ (շինեցաւ)»: «ԹՎական ՌՃԻՆ Ծահնագարին եւ վարդապետին Գրեգորի, յիշատակ է դուռս կոյս Սոսորովին եւ Ծնողացն»:

Տաճարին գաւիթը Մէլիք Ծահնագարեաններու դամբանարանը եղած է: Հոն ամփոփուած են Մանուէլ վարդապետը, Մէլիք-Յիւսէյին, Մէլիք Յովսէփի եւ այն մէլիքներու տիկինները:

Տաճարը շրջապատող պարիսպներէններս եղած են կուսաններու համար յատկապէս շինուած սենեակները: Այսօր անոնց մեծագոյն մասն աւերակի կոյտ եղած է (Արցախ, էջ 95—96. Հմմտ. Ազգր. Հանդ., 1897, Բ., էջ 42—44. ԲաՓՓի, Սամսայի մէլիքութիւնները, էջ 38): Սոյն բնակարանները շատ պարզ էին (Արեւելք, 1894, թ. 3110 եւ Նոր Դար, 1894, թ. 111):

Աւանդութեան մը՝ համեմատ այս կու-

<sup>6</sup> Ուրիշ աւանդութեան մը համաձայն Ծահ Մահմադի տրչաւաններուն (1797) կուսանաց անապատի կրակները կը ցրուին եւ անոր Ս. Սաշի մասունքը կը գերուի, բայց կը վերադարձուի (Ազգր. Հանդ., 1897, էջ 42—43):

սաստանին հիմնադիրն է Վաչագան Գ. Թագաւորը, մինչ յիշատակագրութեան մը համաձայն Գայիանէ եւ Հոփիսիմէ կոյսերը զայն Տէր Առաքելի աջակցութեամբ բարձրացուցած են (Ազգր. Հանդ., 1897, Բ., էջ 42. Զալալեան, Ճանապարհորդութիւն, Բ., էջ 246—247):

Նոյն անձերու մասին կարեւոր տեղեկութիւններ ունի նաեւ հետեւեալ արձանագրութիւնը՝ «... Արդ զընցաւ սուրբ Աւետարանս ի թուականութեանս Հայոց ՌՃԹ (1660) թըւին. աւարտեցաւ սա ձեռամբ անարժան... Կատարինիս ի երկիրս Վարանդու (ի) կաթողիկոսութեան Աղուանիցս Տեառն Պետրոսի եւ եպիսկոպոսութիւն (sic) տէր Յովանիսի եւ թագաւորութիւն Ծահնագարին եւ իշխան մալիք երկիրս Մէլիք Բաղին եւ խոստովանահայր սուրբ անապատի որ մերձ զօղաքաղաքիս Աւետարանոցիս գտէր Առաքելաւն եւ միարան քորք վանացս զկուսանուհին Գայանէն, որ եղև ծաղկող սուրբ Աւետարանիս եւ համշիրակ ընկերակից քոյրն իմ զՀոփիսիմէն, որ է մայր սուրբ անապատիս:

«Արդ հետ աւարտման սուրբ Աւետարանիս Ե. ամ եկաց սոյ կազմելո եւ ապա կազմեցաւ թըւին ՌՃԳ (իմա՝ ՌՃԹԳ): Եւ դարձեալ աղաչեմ... յիշեսցէ... յաղօթս ձեր զղարիս կրկին զարիպացեալ հոգով եւ մոխաքաւաղ եւ հոգս հաւասար Կատարինէս եւ զմայրագութ եւ սննդամայր վարպետն իմ զՄարիամ կուսանուհի, զոր սնոյց զիս եւ կարգացոյց բազում աշխատութեամբ եւ յետ իւրոյ աշխատութեանն ետ զիս ի ձեռն Աստուածատուր քահանային վասն շարականի եւ զիր ուսուցանելոյ, որ էր նա խոստովանահայր անապատին Ծէնհէրու, զոր եւ ուսոյց զիս իրբեւ զմայր մանկան իւրոյ բազում աշխատանաւք, զոր Տէր Աստուածն ամենայնի ինքն հատուցէ զվարձս աշխատանաց իւրոց հայրախնամ քաղցրիկ Տէրն մեր՝ իմ գտէր Աստուածատուր քահանայն, որ է նա բնիկ երկրէն Վանա եւ Մարիամ վարպետն էր երկրէն Նախալվանու ի գօղն որ կոչի Դարաշամբ» (Ոսկեան Հ. Հ., Մայր Յուլ. Վիենն. Մխիթ. Մատ. թ. 931 (=873), էջ 471, անտիպ. Հմմտ. Ակոս, 1949—1950, թ. 4, էջ 100):

Վանքին շէնքը 1814ին վերանորոգուած է եւ հոն ետուն գործունէութիւն մը վերականգնուած (անդ, թ. 111):

4. ԲԱՐԵԱԻ ԾԱՌԻ ԿԱՍ ԶՈՒՏ—ՊՈՒԼԻԱԾԱՌԻ ՎԱՆՔԸ

Վերին-Թաղապարզի հարաւային կողմը ձուածեւ բլրակի մը վրայ բարձրացած է այս վանքը, որուն իսկական անունը չենք գիտեր — գուցէ Ս. Յովհաննէս կամ Ս. Պետրոս-Պօղոս — եւ այսպէս կը կոչենք իր գիւղին անունովը: Փոքրիկ վանք մըն է եւ ունեցած է շրջապարիսպ: Երբեմն Ամարասի ամարանոցն եղած է, իսկ այժմ ուխտատեղի: Ունի քանի մը արձանագրութիւն:

Սաչքարի մը վրայ կայ՝ «Յիսուս Քրիստոս, Հայոց թՎ. ՈՂԷ, ԵՍ ԱՂԻ ՈՐԳԻ ԶԻՆՈՎՐԻՆ ԵԿԻ Ի Պարսից, շինեցի գուրբ եկեղեցիս Աստուծոյ, փրկութիւն հոգոյ իմոյ, որք երկրպագէք զիս յաղաթս յիշեսցէ եւ Աստուած զձեզ յիշէ»:

Քարի մը վրայ՝ «Սուրբ Պաւղոս, յամս աստուածապատիւ եւ հոգեւոր Տեառն Յովհաննիսի Ամարասա եպիսկոպոսին եւ պետութեան Տեառն Գագիկա Աղուանից իշխանաց իշխանի եւ Հայր Կիրակոս առաջնորդ սուրբ ուխտիս, եղբաւորդի Կոկանա»: Նոյնին միւս երեսին՝ սուրբ Պետրոս. կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգո իմո եւ ծնողաց իմոց: Արդ որք երկրպագէք սուրբ Նշանիս, զիս յաղաթս յիշեցէք եւ Աստուած զձեզ յիշեսցէ. ՆՍԶ. էր»: Ուրիշ քարի մը վրայ՝ «Յիսուս Քրիստոս Աստուած, Ուսեփ երէց»: Տարբեր քարի մը վրայ՝ «Հոգեւոր հարք եւ եղբարք զՍողոմոն երայց (երէց) կանդնող խաչիս յաղաթս յիշեսցէք, աղականդնող խաչիս յաղաթս յիշեսցէք, աղականդնող խաչիս յաղաթս յիշեսցէք» (Արցախ, էջ 90—91. Ազգր. Հանդ., 1897, Բ., էջ 7—8. Լէօ, Ուխտաւորի յիշատակարանը, էջ 1—14. Էփրեմեան, Բնաշխ. Բատարան, Բ., էջ 11. Հմմտ. եւ Ամարասի վանքը):

5. ԲՈՂՐԵԱՆԻ ՎԱՆՔԸ

Հիմնուած է համանուն սարին հարաւարեւելեան կողմը՝ փոքր ձորակի մը ձախ լանջին մէկ հարթակին վրայ: «Ըստ ամենայնի ունի եկեղեցու ձեւ՝ կառուցեալ անապատի վանքի կամարի վերայ: Եւ իր Ունի մի մեծ եւ միայն մի փոքր խորան, մի Ունի մի մեծ եւ միայն մի փոքր խորհրդադուռն, երեք լուսամուտ, երկու խորհրդադուռն» (Արցախ, էջ 109): Շրջապատուած է բանաւոր սրբերով: Միարաններու սե-

նեակները քանդուած եւ վնասուած, միայն առաջնորդի սենեակը դեռ անվնաս: Վանքին շուրջը կայ անտառ մը, որ ունի պատուական ջուր եւ մաքուր օդ (Արցախ, էջ 109. Ազգր. Հանդ., 1897, Բ., էջ 50—51. Էփրեմեան Հ. Ս., Բնաշխ. Բատարան, Ա., էջ 430):

6. ԲՈՒ ԵՂՅԵ ԿԱՍ ՀԱՅԻ ԳԻՒՂԻ ՎԱՆՔԸ

«Հացի գիւղից դէպի արեւելք սարալանջի մը վրայ կը գտնուին բազմաթիւ գերեզմաններ, իրարու մերձ երկու եկեղեցի, երկու մատուռ եւ երեք բեմ: Մատուռների եւ եկեղեցեաց մէջ նստած են յատկապէս վանահայրեր: Կարծում ենք որ Աղուանից Թագաւորացների, իշխանագների մարմիններն ամփոփուած լինին այս առանձնապէս պատրաստուած շինութեանց մէջ եւ աղօթաւոր վարդապետներ կարգուած պաշտօնապէս: Այսպէս էին Սոթայ, Սաթրոց, Գանձասարայ, Եղիշառաքելի, Հոռեկայ եւ այլն վանքերն եւս» (Արցախ, էջ 125. Ազգր. Հանդ., 1897, Բ., էջ 47):

Առաջին եկեղեցին լերան դազաթը՝ տափասանի վրայ հանդիւմ է եւ չունի գմբէթ ու սիւն, ունի նեղ աւազ խորան մը եւ երկու պահարան, որոնց դռները գեղեցիկ նշխարով եւ խաչերով կարտիակուած են: Սեղանին ստիւղը հետեւեալ արձանագրութեամբ քար մը կայ՝ «ԹՎին ՉԹԹ ի տէրութեան... ար Ստեփանոսի յե... սիսի (յեպիսկոպոսութեան Ներսիսի) ԵՍ Մխիթար որդի... կանդնեցի»: Այս եկեղեցոյն մէջ կան բաւական թուով գերեզմաններ, որոնցմէ մէկուն վրայ կը կարդացուի՝ «Այս է տապան տէր Յօհաննիսին որդի տէր Կարապետին, թՎ. ՌՄՆԷ»: Երկրորդ եկեղեցին անոր արեւմտեան կողմն է, փոքր եւ ամբողջն է:

Առաջին մատուռին դրան հիւսիսային սեմին վրայ կայ՝ «Չ. Ծահն վարդապետ եկեղեցոյս յիշեցէք ի Տէր»: Իսկ անոր դրան (արտաքուստ) վերեւը՝ «քահանայ եւ եղբայր իմ Վահրամ»:

Երկրորդ մատուռն ունի այս արձանագրութիւնը՝ «Ձաչենիկ վարդապետ սուրբ

<sup>7</sup> Անոր մերձ ջարդուած քարի մը վրայ կայ՝ «Այս տապան իմիւր որդուն Սարգիսին, էն ժամանակն որ Պապա Ուշաղին թՎ. ՌՃԶԳ, որ եկն, ես թապուղի առաջ տուալ իլի, այնին ճգովն սպանեցէն, հերքեանցս Աթային, Հերիքիս» (Արցախ, էջ 127):

Եկեղեցոյ յաղաթս յիշեցէք ի Քրիստոս» (Արցախ, էջ 125—126. Ազգ. Հանդ., 1897, Բ., էջ 47—48):

Բեմերն ալ արձանագրութեամբ օժտուած են: Ա. բեմն ունի. «ՆԱ. թիւս... տէր վարթ... ի տարին Ի. Ժամ... աղտատե... անէաքս... մեր սու... աղաչեմ»: Դարձեալ՝ «Ես Սաչենի... կանգնեցի վարդապետս սուրբ նշանաւ... որդի վարձամա. որք կարգէք յաղաթս յիշեցէք ի Քրիստոս»: Բ. բեմն ունի՝ «... իւրս... մա... Միսթարսս ո՞վ այրեցայ... բենա... ասվաքչին զիսն պայտի... տէր... Մնպատա ոչ յիսա զգերլելոց... ի թարաս է մին պեա... ի միսն պատ... սուրբ աղաթս ձեր...»: Գ. բեմի վրայ կայ՝ «ԹՎ. ԶԺ. Թ... ի կաթուղիկոսութեան տէր Լստեփաննոսի եւ յեպիսկոպոսութեան հայր տէր Ներսէսի Աստուծով մեր եղբարցս... ուց այդ եղայ վարդս... այսր կաթ... բամիկս... յորդեացս... եւ ծնողաց մերոց... ազգականաց... բար...» (Արցախ, էջ 125—126):

Այս արձանագրութիւնները կը պատմեն՝ թէ բաւական եռուն կեանք մը եղած է այս կողմերը:

7. ԲՐԴԱՆՈՒՆՅԻ ՎԱՆՔԸ

Վարանդի «Բրգասոնջի եղցի»ին մօտ «կայ քարուկիր հին շինութիւն մը, որ նման է սենեակների: Մեզ թուում է թէ վանք եղած է այս, քանզի թէ եկեղեցի եղած լինէր անշուշտ կ'ունենար զիւղատեղու աւերակ եւ հանգստարան, բայց չունի ոչ այս եւ ոչ այն» (Բարխուդարեան, Արցախ, էջ 90):

8. ԵՂԻՇՍ ԿՈՒՍԻ ԱՆԱՊԱՏԸ

Կանգնուած է Եռլի արեւելքը, Լուսաւորչի սարի եւ Սօս, Գերթ ու Դուղի-ճարտար զիւղերու միջեւ բարձրացած լեռան մը վրայ: Երևում է անտաշ որձաքարով, միայն թէ կամարներն ու բոլոր անկիւնաքարերը սրբատաշ քարերով (Արցախ, էջ 116): «Երկու հասարակ սիւնի վրայ բոլորում են ուսմանական կամարներ եւ կամարակապ ձեղուն, որի մէջտեղից բարձրանում է մի փոքրիկ կաթուղիկէ, որ ծառայելու է եղեր էրբեւ զանգակատուն» (Ազգ. Հանդ., 1897, Բ., էջ 46. Էփրիկեան Հ. Ս., Բնաշխ. Բաւարան, Ա., էջ 676):

Մենաստանն 16 մետր երկարութիւն եւ զբեթէ 10 մետր լայնութիւն ունի: Անոր աւազ խորանին տակ ամփոփուած են Եղիշէ կուսի նշխարները:

Այս տեղ կան հետեւեալ արձանագրութիւնները՝

«Յիշատակ է Համասուտանց Մերգախանի որդի Մանուէլ վարդապետիս այս խաչկալս, եղբարքն իմ Պապան եւ Վանլալան, քարար (քորք) իմ Գուլամար, Ինթաղիհ, ծնողքն իմ Մուսխանոիմ, կողակից իմ Նազլու, որդի իմ Հախնազար, Ծահպատ, Սիրուն, Վոսամին, Մազրվանին եւ դստերն իմ Բաջուն, Դօղաշին, թվ. ՌՃԴ» (1655):

«Ղազար կողակից ուր (իւր) Նազու թվ. ՌՃԴ»:

Հիւսիսային խորանին ճակատակալ քարի վրայ՝ «Ես Աղէս կանգնեցի զխաչս փրկութիւն ինձ եւ կենակցին իմոյ, որդւոյ եւ դստերաց իմոց»:

Դրան ճակատակալ քարին վրայ՝ «Կարողութեամբ ամենագորին Աստուծոյ ես նուստ տէր Յոհան անձամբ տկար արեղայս եւ որդէզիր տէր Յոհանս շինեցաք սոյն զեկեղեցիս ըստ անուան Սրբուհոյ Կուսին Եղիշէի ի կաթուղիկոսութեան տեառն Երեմիայի եւ տանն Աղուանից, որ ի մայր աթոռոյն Գանձասարայ, վասն որոյ յիշել աղաչեմք հանդերձ ծնողովք մերովք ՌՃԴԴ»:

Լուսամուտին գլխուն՝ «Տէր Աստուած Յիսուս Քրիստոս, ես անարժան ուստայ Կարրըլա շինեցի այս եկեղեցիս ի ձեռամբ իմով, ով կարգա մէկ բերան ողորմի առ խաչս յիշատակ է Գարբելիս եւ ծնողաց իմոց եւ դստերաց եւ որդոց իմոց» (Արցախ, էջ 115—117. Ազգ. Հանդ., 1897-Բ., էջ 46—47, երկուքին ընթերցումին մէջ բաւական տարբերութիւն կայ:

Եթէ խորհինք թէ վերջընթեր արձանագրութիւնը ոչ թէ վանքին վերաշինութիւնը, այլ հիմնադրութիւնն ու կառուցումը կ'ակնարկէ, այն ատեն պիտի եզրակացնենք՝ թէ մաս մը սոյն արձանագրութիւններէն ուրիշ տեղէ հոս բերուած է, վասն զի Երեմիա Բ. 1175է յետոյ կաթուղիկոս եղած է:

9. ԿԱՆԱՆԻ ՎԱՆՔԸ

Հին Դրախտիկի հիւսիսային կողմը՝ բարձր լեռան մը գագաթին վրայ՝ կայ Կախան անուն ուխտատեղի մը, որ հաւանակա-

նարար կանխաւ վանք եղած ըլլայ (Արցախ, էջ 88—89):

10. ԿԱՐՄԻՐ ԵԿԵՂԵՑԻ ՎԱՆՔԸ

Հիրհեր զիւղի արեւելեան կողմը, Մովսեղ զիւղի մերձ բլրակի մը վրայ կը գտնուի Մէլիք Փաշաեանցներու դամբանարանը, որ ունեցած է միաբաններու սենեակներ եւ վանք եւս եղած:

Դամբանարանը ստորերկրայ է եւ բաղկացած չորս մատուռներէ, որոնց մեծագոյնը կարելի է եկեղեցի համարել: Առաջին մատուռն ճակատակալ քարին վրայ արձանագրուած է՝ «ԹՎ. ՈՂ. Դաւիթ եպիսկոպոս յիշատակ է եկեղեցի վանքս, որ լինի սա դամբարան եւ շիրիմ մերոց նախնեաց»: Անոր խորանին հարաւային կողմը խաչի մը վրայ կը կարդացուի՝ «ԹՎ. ՌԼԵ. ի հայրապետութեան Դաւիթ առաջնորդի Մէլիք Փաշի, Պետրոս եպիսկոպոս»: Վէմ քարի վրայ կայ՝ «Դաւիթ եպիսկոպոս»: Բեմին խաչին վրայ՝ «Դաւիթ արեղա կանգնեցի զխաչս Առան վարդապետի Տարսնեա... եւ զիս իշա (ձեշեա)»:

Սորանին հիւսիսային խաչքարին վրայ կը գտնուի՝ «ԹՎ. ՌԻԵ. ի հայրապետութիւն տէր Յովհաննիսի, առաջնորդութիւն Մէլիք Փաշին յանուն Աստուծոյ եւ Սահակ եպիսկոպոս կանգնեցի զխաչս ի փրկութիւն եղբար մերոց Ղազարին, աղաթս յիշեցէք»:

Մեծ խաչի մը կէս երեսին վրայ կը կարդացուի՝ «Այս է Սահակ եպիսկոպոսն, որ փոխեցաւ», միւս կողմին վրայ՝ «Անուամբն Աստուծոյ եւ Պետրոս եպիսկոպոս, Դաւիթ խան այանս կանգնեցինք զխաչս ի փրկութիւն Սահակ եպիսկոպոսին աղաթեցէք»: Իսկ խաչարձանի մը վրայ՝ «Իշխանութեան Թահմազին եւ առաջնորդութեան ուխտիս Սահակայ եպիսկոպոսի»: Կան դեռ ուրիշ արձանագրութիւններ (Արցախ, էջ 106—108. Ազգ. Հանդ., 1897, Բ., էջ 49—50): Ինչպէս այս ամէնէն կը տեսնուի Կարմիր եկեղեցիի վանքը աննշան վանք չէր:

11. ԿՈՒՍԱՆՍ ԿԱՆԱՊԱՏԸ

Եռլի թեմին մէջ. նորադոյն հիմնադրութիւն: Կոյս Հոիփսիմէն իր արզիւնաշատ գործունէութեամբ անապատին հոչակը տարածած է (Արցախ, էջ 148—149 եւ Ազգ. Հանդ., 1897, Բ., էջ 27): Նոյն է Ս. Աստուածածնի հեա. հմմտ. վերը:

Հանդ., 1897, Բ., էջ 27): Նոյն է Ս. Աստուածածնի հեա. հմմտ. վերը:

12. ՀԻՐՀԵՐԻ ՎԱՆՔԸ ԿԱՐ ՀԵՐՀԵՐԻ ՎԱՆՔԸ

Ամարասէն զէպի հարաւ, համանուն լեռնագօտին հիւսիսային լանջին վրայ: Հիրհեր զիւղի մէջ: Եկեղեցին Ս. Գրիգորիսի նուիրուած է: Հոյակապ շէնք է: Երկարութիւնն է՝ 19 մետր, լայնութիւնը՝ 14, իսկ բարձրութիւնը՝ զբեթէ 8 մետր: «Չորս սիւների վրայ բոլորում են ուսմանական կամարներ եւ ուսմանական ձեղուն: Եկեղեցու ժողովրդեան կանգնած տեղից բարձրանում է մի փոքրիկ գմբեթ» (Ազգ. Հանդ., 1897, Բ., էջ 39):

Սեղանին ժողովրդահայեաց երեսին վրայ արձանագրուած է՝ «Կամաւն Աստուծոյ եւ Պետրոս կաթուղիկոս Աղուանից սուրբ աթոռոյ Գանձասարայ արքեպիսկոպոսութեան բոլոր նահանգին Վարանդու եւ Քոչիղու, քանզի փեռեկտեալ եւ պատատեալ էին զվիճակ սորին արարեալ ըստ իւրաքանչիւր կամաց, իսկ մեք զցանկ հայրենի նորոգեալ ժողովեցաք, նորոգեցաք զսիրելի աշակերտս մեր զտէր Բարսեղ արհի եպիսկոպոսն, որ եւ հրամայեցաք սմա շինել զեկեղեցի իմ հովարան Ամարասայ, զոր եւ շինեալ կատարեաց ըստ մերում հրամանի յաւուր տաւնի այլակերպութեանն Քրիստոսի եւ աւրհնեցաք զսուրբ տաճարս անուանելով զսա սուրբ Գրիգորիս՝ բերելով ի նշխարաց սրբոյն Գրիգորիսի ամփոփեցաք երկրիս Վարանդու եւ Քոչիղու, զի եղիցի սա երկու աթոռս մի: Ով ոք զայս վիճակս բաժանել եւ զոք նստուցանել այլ տեղի, եթէ կաթուղիկոս իցէ կամ եպիսկոպոս Տէր զայնպիսին նորովեալ եղիցի ՅԺԸ. հայրապետացն, ընդ խաչահանուացն դասացի, Յուզայի մասնակից եղիցի: Այս կտակ եւ արձանագիր յախտեան մնայ հաստատ» (Արցախ, էջ 104):

Հարաւային փոքր խորանի հիւսիսային սեմին վրայ՝

«Մեք Հիրհերայ ճամխաթս տանուտէր Ղասուճս, մեծ եւ փոքր ճանապարհի գլխի տափն ի սկզբանէ վախճ էր սուրբ Աստուածածնին, մեք եւս վախճ արարաք սուրբ Գրիգորիսիս, ով քակէ, նորովեալ եղիցի յԱստուծոյ»:

Հիւսիսային փոքր խորանի հարաւային սեմին վրայ՝

«Աստուած ողորմի տնտես Մարիամին, որ է. տարի եկեղեցուս հացն եւ ճաշն առաւ»:

Աւագ խորանի հիւսիսային կամարակապ սիւնի վրայ՝

«Կաման Աստուծոյ եկի Աս... թիւն Հայոց ՌՃԵ-ին հանդերձ Յս... Ալէքսան, Եղիայ եւ Մարտիրոս եպիսկոպոսոքս, որ առ Աստուած փոխեցան, որ թիւն էր ՌՃԺԶ Ի Ա. Յուլ. հիմնարկեցաւ սուրբ տաճարիս... արնա սուրբ Գրիգորիս ձեռնառութեամբ... Ի թիւն... աշխատանս արարի... Մահապի Գէտուն... ցէ ըստ աշխար... անց... յիշեցէք... ցս ոս...»:

Արեւմտեան դրան ճակատակալ քարին վրայ՝

«Ես Պետրոս կաթողիկոս աշակերտ Ղուկաս վարդապետին ետու շինել կաթողիկէս յիշատակ ինձ եւ աշակերտին իմոյ Բարսեղ եպիսկոպոսին, յիշեցէք Ի Քրիստոս»:

«Աստուած աւրհնէ Գոչիզու ժողովուրդն այն աւրհնութեամբն, որ ոչ անցանէ, ձեռնուտու եղին կրին եւ քարին»:

«Չարութեամբն Աստուծոյ շինեցաւ սուրբ եկեղեցիս Ի դառն եւ Ի նեղ ժամանակիս, վասն ծովացեալ մեղաց մերոց, եկն մարախ եկեր գերկիրս Աղուանից եւ աւերեաց բազում տեղիս Ի թաղաւորութեան Ծահ Սուլէմանին, պարսնութեան Միրզա Ղուլի բէկին եւ իշխանութեան երկրիս Վարանդու Մէլիք Բագու որդի Մէլիք Ծահնապարին եւ օժանդակութեան (թեամբ) Ովանիսին եւ քահանայից եւ տանուտեարց, մեծամեծաց եւ փոքունց ամէն, թվին ՌՃԻԲ»:

Հարաւային դրան ճակատակալ քարին վրայ՝

«Շնորհօքն Քրիստոսի ես Բարսեղ եպիսկոպոս աշակերտ Պետրոս կաթողիկոսին եւ ծնողսն իմ Աղայն եւ Գիւլաղայն Ի գաւառէն Վարանդու Ի գեղջէն Գիւլուն, նորոգեալ պայծառացուցի զսուրբ աթոռս Ամարասայ, պարսպօք շրջապատեցաք հանդերձ յոգնաթիւ սենեկօք, գեկեղեցիս շքեղացուցաք զարդուք, տուաք շինել գեկեղեցիս անուամբ սրբոյն Գրիգորիսի Հովարան սուրբ Աթոռոյն Ամարասայ, որ եւ մասն բերեալ Ի նմանէ ամփոփեցաք աստ, իսկ հիմնարկեցաւ ՌՃԺԶ թվին. կատարեցաւ ՌՃԻԵ-ին» (Արցախ, էջ 104—106. Ազգր. Հանդ., 1897, էջ 41—43. Ջալալեան, Ճան., Բ., էջ 330—332):

Վերոյիշեալ արձանագրութիւններէն ահեկեալ է որ Բարսեղ եպիսկոպոսը Պետրոս կաթողիկոսի հրահանգովն ու օժանդակութեամբ Հիրհերի Ս. Գրիգորիս եկեղեցին շինած է եւ զայն բազմաթիւ սենեակներով օժտած<sup>8</sup>: Այդ վայրը պիտի ըլլար Ամարասի կաթողիկոսներու հովարանը — ամարանոցը — եւ շատ բնական է որ անոնց իրաւասութեան ենթակայ:

Հետեւեալ յիշատակագրութիւն արձանագրութիւններու ըսածները կը հաստատէ՝ «Փառք... եղեւ կատարուին... Ի ՌՃԺԳ (1664)... Ի հայրապետութեան աշխարհիս Աղուանից Տեառն Պետրոսի... կաթողիկոսի վերադիտողի մեծի աթոռոյն Գանձասարայ, զի այս խոհեմարան հայրապետս աշակերտ էր սրբափայլ եւ ուղիմեծ բարունապետին Ղուկասու, վասն զի այս երեցս երանեալ կաթողիկոս լուսաւորեաց... բոլոր տունս Աղուանից, զոր Ի բազում ամանակաց կայր խախտեալ եւ խանդարեալ Ի կարգաց եւ Ի կրօնից, վանօրայք եւ յամենայն եկեղեցիք: Յորոց մի էր եւ մեծ աթոռս Ամարաս, զի յամանակաց յուրովից կայր աւեր եւ անբնակ Ի մարդկանէ, զի արք ոմանք խենչէք եւ անխոհեմք փեռեկտեալ եւ խրամատեալ էին զթեմ եւ զվիճակ սորին, իսկ կաթողիկոս Պետրոս եկեալ ժողովեաց զվիճակ երկրիս Հարանդ կոչեցեալ, զոր այժմ ասի Վարանդա եւ կացոյց զառաջնորդ զաշակերտն իւր զպարոն Տէր Բարսեղն, որ է ստացող տառիս եւ սա նորոգեաց զԱմարաս պարսպօք եւ բազմաձախ սենեկօք եւ տամբք: Տինա կայր հովարան Ի հնոյ մեծի աթոռոյս հուպ Ի գեղջն Հերհեր, որ կոչիւր Ս. Աստուածածնի վանք, նա եւս էր անբնակացեալ, այլ եւ անդ գնացեալ մեծ հայրապետս հիմնարկէ գեկեղեցի եւ յանձնէ աշակերտին իւրոյ զվերոյգրեալ Բարսեղ պարոն տերին, զի շինեցէ զոր եւ կատարեաց կամարակապ ձեռով եւ գեղեցկանկար դրամբ... որ վերածայնի Ս. Գրիգորիս, որ եւ անդ զարդարեաց պարսպօք եւ խցերօք: Դարձեալ ետ գրել յուրով գրեանս, յորոց միին է եւ զայս պատմագիրք... եւ ետ

<sup>8</sup> Այսօր անոնց հինն անդամ անհետացած (Ջալալեան, Ճան., Բ., էջ 317—319):  
<sup>9</sup> «Ի կաթողիկոսութեան Հայոցս Աղուանից Տեառն տէր Պետրոսի» 1669ին կը գրուի Աւետարան մը, որուն յիշատակարանին մէջ կը յիշուի տէր Անտոն վերագրեալ «սուրբ աթոռոյն կաթողիկոսի վանիցն» (Արցախ, էջ 95):

վախմ... սուրբ Ամարասս եւ նորաչէն Ս. Գրիգորիսի վանուցն...:

«Յիշեցէք Ի սուրբ աղօթիս ձեր զառաջնորդ սուրբ ուխտեացս կորովամիտ եւ հանձարապատում զտէր Բարսեղ արհիւպիսկոպոսն, որ է յերկրէս Հարանդու Ի գեղջէն Կիւլի կոչեցեալ: Ընդ ամին եւ միաբանք տեղոյս զՄարտիրոս, զԱլէքսան, եւ զԵղիա պարոն տեարքն, այլ եւ որք կանն Ի պաշտօն ուխտեացս զՈվանէս պարոնտէրս զտէր Ռսկանս. զորս, զտէր Մկրտիչս եւ զտէր Ռսկանս. զ. յիշեցէք... զՄարտիրոս պարոն տէրն, որ մականուամբ Շեկ կոչիւր... ընդ որոց եւ զիս զՍիմոն...» (Թօփճեան, Յուլ. հայ. Չեռ. Դագեան Վ. Ի, Ա., էջ 100—101, հմմտ. Արարատ, 1895, էջ 389—390):

Յիշատակագրութենէս եւ այն կ'իմանանք՝ թէ Հերհերի մէջ արդէն կանխա վանք մը կար:

Հերհերի ննջեցեալներէն ծանօթ են հետեւեալները՝

«Այս է տապան հայրապետի սրբազան մեծ վեհապետին, Տեառն Իսրայէլ զիտապետի, տանս Աղուանից հովուապետի, Աջոյդ պետի, տանս Աղուանից հովուապետի, Ժասրբոյն զԵրէկէի, Աթոռակալ Գրիգորիսի, Ժասրբոյն մեծի Սիմէօնի եւ թոռն պետին Ներսանդ մեծի Սիմէօնի եւ թոռն պետին Իշխանաղայ սիսի, Ձի էր որդի մեծասեռի, Իշխանաղայս այն Ապրէսի, ՌՄԾԻ Հայոց թուի, Յուլիս երեքն վախճանի, Յիշման առցէ սա արժանի, Ով որ կարգալ հանդիպեցի»:

Խաչի մը վրայ կայ՝ «Այս է Սահակ եպիսկոպոսն, որ փոխեցաւ Ի Քրիստոս թվին ՈՒ»: «Ես Պետրոս կաթողիկոսս, Դաւիթ ՈՒ»: «Ես Պետրոս կաթողիկոսս, Սահակ եպիսկոպոսն, Ճան., Հանդ., 1897, Բ., էջ 41. Ջալալեան, Ճան., Բ., էջ 332):

13. ՂԵՆՈՂԵՆԻ ԱՆՍՊԵՏՈՍ ԿԱՄ ՂՈՆԳԻԿ ՎԱՆՔԸ

Հիմնուած է բարձր սարի մը գագաթին վրայ, որ ձուլածեւ արձանացած է Աւետարանոց զիւղի եւ Սարգսաչէնի կենդորոնները: Անտաշ քարերով եւ առանց գմբէթի մատուռ մըն է, որուն արեւմտեան եւ հարաւային կողմերը շինուած են քանի մը սենեակներ ուխտաւորներու եւ միաբաններու — աւելի ճիշդը՝ ձգնողներու — համար: Ունի գաւիթ մը, որուն դրան սեմին վրայ գրուած է՝ «ՌՄԻԷին յիշատակ է գաւիթս Չաքարիս, Յովսէփ եւ Մելքոն վարդապետացն»: Հարաւային կողմը (վանքին) է՝ գերեզմանոցը

ուր ամփոփուած են քանի մը վարդապետներու մարմինները: Շիրիմնաքարի մը վրայ կայ՝ «Աստանօր հանգչի մարմին Յակովբայ սուրբ վարդապետի որդոյ Թոմասայ Աւան Լալաեան յազդէն Իւզրաշեանց յԱւետարանոց գեղջէն Վանանդայ սրբակրօն ճգնաւորական արար իւր կենաց զբարեօք վախճան 33 ամաց, 1845 Նոյեմբ. 25»:

Ղեւոնդեանց անապատի մէջ յարգուած են Ս. Թագէտոս առաքելի, Յովհաննէս Մկրտիչի մատուռները եւ երկու խաչ: Ասոնք ունին փորագրութիւններ — վերջին ժամանակէ: Մատուռը նուիրուած է Ղեւոնդ վկայի, որ իր Աննա քրոջ հետ նահատակուած է:

Այնպէս կը թուի թէ Ղեւոնդեանց անապատը բաւական սիրուած ու բնակուած ուխտաւորներու եղած ըլլայ: Ստացած է վարելահող, անտառ ու պարտէզ (Արցախ, էջ 92—33. Ազգր. Հանդ., 1897, Բ., էջ 45. Արձագանք, 1886, էջ 578. Արարատ, 1816, էջ 44. Նոր Դար, 1899, Թ. 89):

14. ՄԱՍՏՈՍԻ ՎԱՆՔԸ

Մասա շէնի կամ գիւղի մօտ, իսկական անունն՝ անձանօթ: «Վանքս որ կառուցեալ է երկու սիւների վրայ, ունի եկեղեցու ձեւ: Խորանի տակ կայ չորս գերեզմանաձեւ շիրիմ, որ նորոգուած է երբեմն երբեմն տաճարիս հետ միասին: Մեծ ուխտատեղի է վանքս եւ շիրիմներս: Վանքիս մօտ եղած են խցեր միաբանից համար, որք աւերակ են այժմ բոլորովին» (Արցախ, էջ 103. հմմտ. Ազգր. Հանդ., 1897, Բ., էջ 51):

15. ՄԵՍՆ ԵՄԱՍՏԱՊԻ ՎԱՆՔԸ

Սարի մը գագաթին վրայ «որ սահմանն է Աշան, Նորչէն եւ Ղզաղա գիւղերի» կը գտնուի քարուկերով շինուած մատուռ մը: «Երեւի թէ փոքր միաբանութիւն եղած է այս տեղ, մինչեւ ցայսօր վարդապետի տափ են անուանում արօտավայրը, որ այս մատուռին ստորոտը կը գտնուի: Իսկ անոր շրջապայքը կան սենեակներ» (Արցախ, էջ 124):

16. ՇԵՆԵՐԻ ՎԱՆՔԸ

Շեներ տանող ճամբուն զլիտուն բարձր սարահարթին վրայ կայ եկեղեցի մը, որուն արեւմտեան կողմը՝ քարերկէց հեռաւորու-

Թեամբ՝ կը գտնուի քարուկիր շինութիւն մը, որ սենեակներու կը նմանի: Կը թուի թէ վանքի սենեակներ ըլլան (Արցախ, էջ 90):

17. ՇՕՇԿԱՅ ՎԱՆՔԸ

Խաչմաշ եւ Մամնայ գիւղերու միջեւ: Հին վանք: Ստէպ նորոգութիւն տեսած: Տաճարը՝ 9 մետր երկայն եւ 6 մետր լայն: Ունեցած է երեք լուսամուտ, դուռ մը եւ խորան մը (Արցախ, էջ 100. հմմտ. Ազգ. Հանգ., 1897, Բ., էջ 51):

18. ԶՈՆՏԱԿ ԵՂՅԻ

Վերին-Թաղավարդի մօտերը «միտեանց կից շինուած են երկու եկեղեցիներ, որք նոյնպէս կիսաւեր են: Հազիւ թէ քարընկէց հեռի են երկու աւերակ եկեղեցիներս վանքի աւերակիցն: Մենք կարծում ենք՝ թէ այս երկու կիսաւեր շինութիւններն եւս վանք եղած լինին, քանզի ոչ մօտ գիւղատեղի կայ եւ ոչ հանգստարան» (Արցախ, էջ 91):

(Շարունակելի:)

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ԵՂՅԵՆ ԿԱՐԳԵՆԵՍ ԵՐ ԻՐԻ ՊԱՏՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԳԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԵՍԻՐՈՒԹՅՈՒՆ

(Շարունակութիւն եւ վերջ:)

73. ԱՆԻՐԱԳԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քսան տարիներ ունինք մեր ետեւ: Ուսումնասիրութիւնս սկսած էր լոյս տեսնել մաս առ մաս 1931 յունուարին. ի սկզբան արագ թափով եւ ապա դանդաղօրէն, նաեւ երկար ընդհատումով, 20 ընդարձակ յօդուածներով (Հանգ. Ամս. 1931—1937, 1950 եւ 1951): Պարագանքը դանդաղեցուցած էին ընթացքը, իսկ կասեցուցած էր երկրորդ համաշխարհային պատերազմը, որուն սկզբնաւորութեան կը գտնուէի Երուսաղէմ գիտական ուղեւորութեամբ մը. 1940—1946 տարիները անցուցած էի Բէյրութ:

Ուսումնասիրութիւնս աւարտեցաւ § 17 գծում ծրագրիս համաձայն, գրեթէ անփոփոխ: Փորձ մըն էր ան վերականգնելու

Եղիշէի Պատմութեան սկզբնաղբը, որ ենթարկուած էր տարօրինակ խմբագրութեան մը: Թէ ո՛րչափ յաջողած եմ, կը թողում դատել անկանխակալ ընթերցողներու: Առաջին փորձն էր սկզբնագրին վերակազմութեան. եւ իբրեւ այսպիսի պիտի ունենար անշուշտ սրբագրելի կէտեր: 1931ին երբ կը ձեռնարկէի աշխատութեանս, լուսաւորուած էի արշալոյսի լուսով, աստիճանաբար, արեգակին հորիզոնին վրայ բարձրանալուն հետ, պարզուեցաւ աչքերուս ուսումնասիրութեանս հորիզոնն ալ: Այս պատճառով ալ պիտի խնդրեմ ընթերցողներէս, որ ներեն ինձ, եթէ § 7—17 եւ այլուր արտայայտած մտքերս յընթացս ուսումնասիրութեանս փոփոխութիւններ կրած ըլլան դէպի լաւագոյնը: Նաեւ վերջին 20 տարիներու ընթացքին կատարուած էին նոր հետազոտութիւններ մատենագրական եւ պատմական մարզերու մէջ եւ բերած նոր լուսարանութիւններ, որոնց մասին տարբեր էին 1931ին ըմբռնումները: Յատկապէս նշանակութիւն ունին մեր ուսումնասիրութեան համար երկու գրութիւններ՝ Եղիշէի կեանքին եւ գրականութեան եւ Ղազար Փարպեցւոյ Ա. Գրուագին հայող, լոյս տեսած Հանգ. Ամս. ի նախորդ եւ այս տարիներուն:

Յաջորդ էջերու մէջ պիտի անդրադառնամ այնպիսի կէտերուն միայն, որոնք կարելոր են ուղղելու եւ լրացնելու նախորդ գրութիւններու մէջ արտայայտուած խորհրդածութիւնները եւ ժամանակագրական ցուցմունքները:

1. Յընթացս գրութեանս ներկայացուցած էի Եղիշէն ժամանակակից եւ ականատես 2. դարու երրորդ քառորդի դէպքերուն, եւ այն հայ փախստականներու թուին մէջ, որոնք ապաստանարան փնտռած էին Կ. Պոլիս Հայոց Յովհաննէս կաթողիկոսին հետ. եւ համարած էի թէ Եղիշէ ա՛յս տեղ հրաման ընդունած է վարդան Մամիկոնեանէ գրելու իր Պատմութիւնը (§ 13—14): Բայց երբ մանր ըննութեամբ ուսումնասիրուեցան Եղիշէի կենսագրական գծերն (§ 70) եւ մատենագրութիւնը (§ 71), անոր ժամանակը երեւան եկաւ. դարու երկրորդ եւ երրորդ քառորդին մերձաւորապէս: Այս շրջանին կ'ապրէին Դաւիթ Տարօնեցի եւ Դաւիթ Մամիկոնեան, որոնցմէ մին կամ միւրը եղած պէտք է ըլլայ Պատմութեան հայցողը՝ Դաւիթ Երէջ

Մամիկոնեան: Այս դէպքին կարող էր Եղիշէ օգտուած ըլլալ Յովհ. Եփեսացւոյ Պատմութեանէն, ինչպէս նաեւ Բիւզանդեան պատմագիրներէն, ուղղակի կամ միջնորդաբար:

2. Բարձումայի աղբյուրը Եղիշէի հետ (§ 8), ինչպէս Թոմաս Արծրունի կը ներկայացնէր, չէր կրնար պատմական նկատուել, բայց պատմական հարկ է համարել Բարձումայի Աղծնիք մուտ գործելը, քանի որ Միք. Ասորի եւ Բարձրբէրէոս անոր յիշատակութիւնը կ'ընեն: Իսկ թէ Թոմաս Ի՞նչ աղբյուրէ օգտուած է, մեզի անձանօթ կը մնայ: Արծրունի պատմագիրը կը մեղադրէ Բարձուման, թէ ան Եղիշէի մատենանէն էջեր փրցուցած է, որոնք կը պարունակէին Արծրունի իշխաններու քաջութիւնները եւն: Իր աղբյուրի՞ն մէջ կարդացած էր այս անցքն ալ, թէ լոկ բերանացի աւանդութիւն մը մերձեցուցած է Բարձումայի, որ Արծրունի իշխաններէն հալածուած էր: 450/51 տարիներու կռիւներուն Արծրունի իշխաններուն մատենակցութիւնը յիշած էր Ղ. Փարպեցի եւ անկէ առնելով նաեւ Եղիշէ: Եթէ աչքի զարնող քաջագործութիւններ գործած ըլլային Արծրունիները, անշուշտ անտես պիտի չընէր Փարպեցի: Ուստի Թոմայի ակնարկութիւնը կարելի չէ իմանալ 450ի կռիւներու մասին: Բայց հնարաւոր է 571—573 տարիներու դէպքերուն մերձեցնել, երբ Քաջն Վարդան Մամիկոնեան անցած Վասպուրականի մէջ զօրաժողով եղած բանակին գլուխը հասաւ Գուրգէնը: Այս անջատումը երկար տեւեց:

գրութիւն մը, զայն հարկ է իմանալ Եղիշէի սկզբնագրի մասին, որուն խմբագիրը վրէժխնդրական կամ այլ մղումով մը կատարած է այն չարաչար փոփոխութիւնը:

3. Տակաւին լուծման կարօտ կը մնայ, թէ Եղիշէի սկզբնագիրը Ի՞նչ նպատակով ենթարկուած է այնպիսի չարատանջ խմբագրութեան: Մեր Ուսումնասիրութեան մէջ յաճախ անդրադարձած ենք այս կէտին. եւ հաւանական համարած ենք, որ ձգտած ըլլայ անյիշատակ ընել հայ մտքերէ 570—578 տարիներու դէպքերը, մասնաւորապէս թէ «Հայոց պատերազմը» մղուած է եկեղեցւոյ ազատութեան համար, թէ այդ պատերազմին Հայոց եւ Յունաց մէջ նիզակակցութիւն կնքուած է, թէ կայսեր բանակները Հայաստան միջամուխ եղած են, թէ պատերազմի դաշտին վրայ ինկողները նահատակներ նկատուելու են:

Բայց անյիշատակ ընելով այս դէպքերը, անյիշատակ կ'ըլլային նաեւ Սիւնեաց Վահան եւ Փիլիպպոս իշխաններու ազգազատ գործերը: Անոնք անջատած էին Սիւնեաց աշխարհը մարդստանական Հայաստանէն եւ ենթարկած Ատպատականի մարդստանութեան, ոչ միայն անոր հարկատու, այլ եւ անոր հետ զինակից ըլլալով: Այս անջատումով նաեւ Սիւնեաց եկեղեցին խզուած էր Հայոց կաթողիկոսարանէն, սուրբ Միւռոնը կը ստանար Աղուանից կաթողիկոսին, եւ հրահանգները կ'ընդունէր Երուսաղէմի պատրիարքէն: Այս անջատումը երկար տեւեց:

Սիւնիք ոչ միայն 570—578 տարիներու կռիւներուն իբրեւ նիզակակից պարսիկ զօրքին կուռած էին Հայոց դէմ, այլ եւ, ինչպէս կը հաւաստէ Բալթագորի գետեղուած էին իրարով Ա. ի հրամանով իբրեւ բերդականներ Կաւկասեան այն նորակառուց ամրութիւններու մէջ, զորոնք թագաւորը շինել տուած էր այլ եւ այլ կէտերու վրայ: Սիւնեաց աշխարհը միացաւ միւսանդամ Հայաստանի երբ Պարսկաստան նուաճուեցաւ արարական լուծի տակ (հմմտ. Marquart, Eranshahr, 122):

Թէ խմբագրին նպատակներէն մին եղած է անյիշատակ ջնջել այս անցքերը, կը զգացուի իր ձգտումէն, կատարուած դէպքերը փոխադրելի դար ու կէս յառաջ եւ ծանրաբեռնել Սիւնի վասակի շալակին, զայն միայն պատասխանատու ներկայացնելով գործուած նենգութիւններու կամ սոցալաւ գործերու: